ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2018 թվականի N 04-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) *որոշում է՝*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման ղեկավարի կողմից Խորհրդին ներկայացվող հաշվետվության ձևը և բովանդակությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով սահմանված հաշվետվությունը ներկայացվում է Խորհրդին յուրաքանչյուր կիսամյակի համար՝ ոչ ուշ քան հաշվետու կիսամյակին հաջորդող Խորհրդի հերթական նիստին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ Ա.ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ բնապահպանության նախարարության
բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
կառավարման խորհրդի 2018 թվականի
փետրվարի 15-ի N 04-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
որակի ապահովման ստորաբաժանման կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ

№	Ուսումնասիրման առարկան (ստորաբաժանում /գործառույթ)	Հիմք/Հղում	Առաջարկություն	Ակնկալվող արդյունք	Նշումներ